



14. ԴԱԼՈՒ ԽԸՇԽԸՇ

Ժամանակին մեկ մեծ մարթըմ կէղի, էնու տըղեն կը փըսակա: Ժամանակըմ կընցի, տըղեն ուր կընգան չուզի: Փետըմ կը շինա, կը կախա էնոնց տըռան սարդըրից:

Օրական մեկ անգամ, էրկու անգամ ըզկնիկ էտա փետոսկ կը տըփա ու կախա դան:

Կնիկ օրըմ կասա. - Մա՛րթ, տաւ ընչի՞ ծի կը տըփես, օր ծի չըսիրիս, գըընա՛, Բաժանե Գանչե քանդըքի թակավորի ախչիկ քյե խամար պե՛, էնի շատ խորոտ ա, էլ ծի մը տըփա:

Մարթն ասաց. - Ես կէրթամ:

Էլանվ, էնու խամար փարա վիրուց ու ընգանվ ճանքանխ, գըընաց խըն քանդըք:

Գըընանց, գըընանց, խասավ քանդըք, թակավորի ախչըկե սենյակ մըտավ:

Ախչիկ ասաց. - Ի՞նչ կուզես, մա՛րթ:

Ասաց. - Էկեր եմ, օր քյե ծի խամար տանիմ:

- Էլի՛ տաւս, արե՛, ես պանձ տընեմ իմ մինդըրի տակ, արի՛, խի՛ իմ մինդըրի տակ ի՞նչ եմ տըրե:

Մարթն էկավ ներս, էն ի՞նչ գյինա թի մինդըրի տակ ի՞նչ ա տըրուկ:

Մարթն չիմացավ:

Թակավորի ախչիկ կանչեց, էնու հանճըվի մարթերն էպե, ասաց. - Եսա մարթաւն տարեք, փասթե քոլոզըմ շինեք, գանգանկըմ էցկեք մոտեն, տըրեք գըըլիս, զընջիլ մ'էցկեք վիզ, էրեք

Դավու խըշխըշ, տարե՛ք տեն, պերե՛ք տեն, տըփեք չում էնու մախվան օր:

Առան ըզմարթ, գանցին, փասթե քուղզ շինեցին, զանգանկըմ էցկեցին ծերից, զընջիլ էցկեցին վիզ ու չուր հիրիկուն կը ֆըռան-ցուցեն քանդքի մեչ, կը տըփեն ու կը բոռեն՝ Դավու խըշխըշ, հա՛յ Դավու խըշխըշ:

Ճըժեր, փողնի տըղեկներ կը թըքյեն, քար կը զանեն ու կը բոռեն՝ Դավու խըշխըշ, հա՛յ Դավու խըշխըշ:

Ժամանակ մ'ընցավ, մարթն խընթրեց, ասաց. - Թողե՛ք՝ ես նամակըմ գյըրեմ իմ խոր, օր ես ամլա բալի մեչ եմ ինգե, բալկո գան, ծի ազատա:

Էն ժամանակ նամակըմ կը գյըրա խոր, մեկ կը գյըրա կըն-գան:

Խոր կը գյըրա. «Արի՛, ծի ազատա՛, Աստու սիրուն էղի, ես կրակի մեչ կերեցիմ»: Կընգան կը գյըրա .«Թե ես ազատվա, էկա, քու խոգիւն կը գան»:

Խոր նամակ կերթա կընգան ծեռ, կընգան կերթա խոր ծեռ:

Էն ժամանակ կնիկ կը խղճա, կասա. «Տ'էլիմ, էրթամ, բալկո իմ մարթ ազատեմ, պերեմ»:

Կնիկ կէնի, դաստըմ մարթու խալավ կը խնգոյի, կէնի կերթա Բաժանե Գանչե քանդաքյ:

Մեկ պառվու տուն կէղի մեհվան:

Կը խառցնա պառվուն, կասա. - Եսա ծեր թակավորի ախչիկ ինչպե՛ս ախչիկ ա, օր ո՛ր մարթ էրթա, վիզ կը կըտրա, չըմ գոխտի ի՞նչ կէնա:

Պառավ կասա. - Չուր մըկա որ օր էրթեր, վիզ կը կըտրեր, ամնա հերեկ չէ, մեկէլ մեկ երիտասարթըմ քու պես էկավ, գյընանց, էնու պան չըկարցավ խաներ: Մըկա էնու անուն տըրած եմ Դավու խըշխըշ, էցկած ան սոխըխներ, չուր հիրիկուն փողնի ճըժեր ինգան ան հիտև, կը բոռան, կը ճըվան՝ հա՛յ, Դավու խըշխըշ, ու չում հիրիկուն կը ծեծեն: Հիրիկուն կը պերեն տուն, կը մընա չում առավոտուն, էլըմ կը տանին: Էնու հալ թու հալըմ չի:

Մընաց չում խըլիսուն, խըլիսուն կնիկն օր մարթու ծև խնգ-յեր էր, էլավ, գյընանց:

Գյընանց թակավորի ախչըկե մոտ:

Ախչիկ խարցընեց, ասաց. - Տու հա՛ւր ես էկե:

Ասաց. - Էկեր եմ խըն քյե փորձըվեմ:

Ասաց. - Էլի՛ տաւս, արե՛, ես պա՛ն տընեմ իմ միճդըրի տակ,
թի խանեցիր, ես քան եմ, թի չե՛ քու գըլըիս կը գաննիմ:

Էլանվ տաւս, էկավ ներս:

Մեկ գյուլ-վանտըմ տըրեր էր միճդըրի տակ, էնու ոտ տըրեր
էր վերեմ:

Ասաց. - Եսի ի՞նչ ա իմ միճդըրի տակ:

Ախչիկ մտածեց, չըկարողացավ խաներ: Ուր մոր անուն
Գուե կէղի: Ինքն ուր մտքի մեչ ուր մոր խամար պիտի ասեր՝ ա՛խ,
Գուե՛, ա՛խ, Գուե՛, տաւ ծի չըպերեր, ամա ա՛խ Գուե, ա՛խ Գուե՛
պանցըր ծեմով ասաց:

Թակավորի ախչիկ գյիտցավ թի՛ ուր գյուլն էխան: Ոտ վե-
րուց, գյուլ միճդըրի տըկից էխան տաւս:

Էն ժանանակ ասաց. - Տըղա՛, տաւ ի՞նչըխ իմ փորձ խանե-
ցիր, թու մարթ չըխաներ էր:

Ասաց. - Էնքան մարթու մեղաց տակ մըտեր ես, հալա շատե-
րու էլ տը մըտիս, Աստված էնու խամար ծի խելըք էտու՛ խանեցի:

Ասաց. - Շա՛տ լավ, ես իմ խոր խաբար կանեմ, օր գի իմ
խանելուկ խանեց էսա մարթ, ես էլ էտոր տ՛առիմ, խի ի՞նչ կասես:

Խեր ասաց. - Որտի՛, քու պայման ի՞նչըխ ա, էնպես տ՛ենես:

Ասաց. - Իմ ուխտն էն ա՛ վո՛ն օր իմ խանելուկ խանեց, ես
էնի տ՛առեմ:

Մընաց չուր առավոտուն, սուք տըղին կանչեց, էպե:

Թակավոր ասաց սուք տըղին. - Ախչիկ կը փըսակեմ վըր
քյե:

Սուք տըղեն մտածեց, ասաց. - Ես ախչիկ, էնի ախչիկ, օր
փըսակա վեր ծիկ, կէղի անպատվութեմ: Աղեկն էմալ ա, օր ասեմ
թի ըստա չըմ փըսակվիր, կառնիմ, կերթամ իմ խոր մոտ, թ՛ էնի ծի
փըսակա, օր էնու սիրտ խընդանա:

Թակավոր ասաց. - Լա՛վ կէղի:

Թակավոր էլանվ, քանի՛մ փարա, ծի, տավար, խաց էտիր
խետըր, օր ճանխու տընա:

Օրըմ սուք տըղեն կերթա չարսուի մեչ կը զըվըռա, կը տեսի,
օր հիրիկ էրած Դալու խըշխըշ, չարսու մեչ կը տըփեմ, ճըժեր կըն-
գին խետ ու կը բոռան՝ Դալու խըշխըշ, հա՛յ Դալու խըշխըշ:

Եփ օր հիրկան կը տեսնի, ծեռքերուց կառի:

Էնու զընջիլ պըռնող չըթոնա:

Կասա թե՛ ես թակավորի փեսեն եմ:

Դիրսվան զընջիլ պըռնող կը թոնա:

Ինքն էլ խըշխըշու փիսթ ու զընջիլ կանթորան, կը տըռնա չնավորի մեջ, կը պըռնա ուր ծեռ: Դնալու խըշխըշին դաստըմ խալավ կը խագուցա, կը տանի խետ:

Կասա. - Տըղա՛, քիւ անուն ի՞նչ ա:

Էնու ճիշտ անուն կը տա:

Դիրսվան սուք տըղեն էն անուն կը տա էնու:

Թակավորի ախչիկ կը խառցըռնա. - Էտա ի՞նչ մարթ ես պերե:

Ասաց. - Վոլլա՛, մեր էրկրացի ա, պերեր եմ մե ծառա: Մե ծառաութեն էնա, չուր էրթանքյ մեր խոր էրկիր:

Ասաց. - Շա՛տ լավ, պերեր ես, պերեր ես:

Թակավորի ախչիկ չըճանչըցավ, թե էտի Դնալու խըշխըշն էր:

Էփ օր ճամբախ էլան, թակավոր էնոնց ճամխու էտիր: Օրըմ ճամբախ քյելեցին, էն մեկէլ օր էտոնց կաթըրջին ասաց. - Էրկու ավուր ճամբախ ճուր չըկընդըվի, ճուր առնենքյ պեռներ, տանինքյ մեր խետ:

Դնալու խըշխըշ ինչ ծառաութեն կեներ, էտա կոներ կը գաներ, ճուր կը պերեր, կը լըցեր, սուք տըղեն ծեռքյեր, ոտներ կը վըլեր:

Մընաց, շատ էկան, քիչ էկան՝ խասան էն տեղ, օր էլ ճուր չըկա:

Սուք տըղեն ասաց. - Մեկ իմ ոտաց, ծեռաց ճուր տամ, իմ հիրիկ խըմա, օր խելքյ գն գըլլիխ:

Մընաց չու՛մ առավոտուն, կալին էպե, էտիր տեղ, կերան:

Խըշխըշ տիրոջ հանճևի հավելցած խաց, կալին վերուց, տարավ էնդեխ կերավ, ծարվըցավ:

Էլ էրեսին չիտա, օր ճուր ուզն ուր աղի մոտեն:

Սուք տըղեն հիմացավ, օր էնի անհաշիվ ծարավ էր:

Ասաց. - Ծառա՛, ծառա՛, էտա լնգան, պաներ պե, իմ ծեռքյեր մե քիչ վըլան:

Առավ իբրեղ, լնգան, էկավ, ինքն էլ փառչով պեռնեց ճուր էխան: ճուր էտու ծառայի ծեռ, ըսկըսեց ծեռքյեր օղողել, ոտներն

էլ վրլաց, փառչ ճհւր ամբողջ իլից ոտաց, ծեռաց վերեն:

Էն ժանանակ, օր ծառան առավ, տարավ օր թափեր, շատ ծարավ էր, ճարահատ՝ կուշտըմ խըմեց:

Սուք տըղեն չանդրից տեսավ, օր հիրիկ էնու ոտաց, ծեռաց ճհւր խըմեց:

Խըղճաց վերեն, ինքյն ուր ասաց. «Տիւ էրիր, ես չըմ էնե, ես քյե տ'էնեմ մեկ մարթըմ»:

Առավոտուն էլան, պանցին, գանցին: Շատ գանցին, քիչ գանցին, էնու խոր երկիր մոտխըսցան:

Սուք տըղեն Դանլու խըշխըշին չանդրից մե քիչ գանտընցուց, ասաց. - Մա'րթ, իմ խոր երկիր գանտն տեղ ա, ես էսա դիւց տ'էրթամ խընդ իմ խոր երկիր: Արե իմ ջըլեր տամ քյե, քիւն տու ծի, ես էրթամ խընդ իմ խոր երկիր, տիւ իմ փոխանորդ էլի էսա կընգան տեր: Չըկասկածես, ես կնիկ ունիմ, մեկ էլ էսի տանեմ խետս, ի՞նչ էնեմ: Գի հանթեցի, խերիքյ ի, տամ քյե քիւ ծառաութնի տեղ:

Եփ օր էնու ջըլեր էտու էնոր, խըշխըշ խագանվ, էլավ մեկ խորոտ մարթ: Շատ ուրանխացավ:

Կնիկն խըշխըշի ջըլեր խագանվ, էտոր փիսք ու զընջիլ առեց մոտ ինքյ ու էթող, գյընանց: Գյընանց, խասավ էնոր կետրանց տուն, էնոր հողի մեչ ուր ջըլեր էխան, կընգան ջըլեր խագանվ:

Մընաց չում առավոտուն, ջիւյանք էկավ խըշխըշի խոր, թե՛ քիւ տըղեն թակավորի ախչիկ առավ, էպե:

Էնու խեր, տըրկիցներ գանցին հանճև, առան, էկան տուն, տըղեն փըսակեցին:

Խեր ասաց. - Շա'տ լավ էղավ, հանճ գյընանց, էնու խորոտ կնիկըմ էպե, հանճ էսա քան հարստութեն էլ էպե խետ:

Գյեղացիքյ խառընեցին, թե՛ ի՞նչ գինով պերիր էսա կնիկ:

Ասաց. - Ջանըմ, ընչի՞ կը խանընեքյ, հանլանք մանրիֆանթըմ խըմջեցի: Վո՞ն օր գանցեր էր, էնու գյըլիխ գանկեր էր:

Քանի մ'օր ընցավ, ընգանվ լաճու միտք ուր խին կնիկ, թե ի՞նչըխ էնոր գյըրեր էր թե՛ որ գանմ, քիւ խոգուն կը գանմ:

Էլանվ, գյընանց կընգան սենյակ, օր կընգան տըփա:

Կասեր թե. - Տիւ գի ճանխեցիր, թակավորի ախչըկան պերի, պերի, թի՞ չըպերի:

Եփ օր գյընանց, կընգան տիւռ էպանց, փետ տըրընտուց օր առավ, կընգան ասաց. - Քի խեր-մեր շուն ուտա, թակավորի ախ-

չիկ պերի", թի" չըպերի:

Փետ վիրուց, տը գաներ, կնիկ հաւշիկ մինդըրի տըկեն հա-
մա ըգփիսթե քուղ լխան, էսպես հիրար էտու, շարժեց, զընգ-
զընգոց էլձվ, ու ինքն էլ ասաց՝ Դալու խըշխըշ, հա՛յ, Դալու
խըշխըշ:

Մարթն էսպես՝ վեր ուր հըզգաց: Նոր խասկըցավ, թե ուր
կնիկն ա, օր էկեր ա, զինքն ազատեր, թակավորի ախշըկեն հաղ-
թեր ա:

Ասաց. - Ամա՛ն, կնի՛կ, Աստծու սիրուն էղի, իս էրեր են, տաւ
չենես: Տաւ ծի աշխըրքի մեջ խայտառակ չենես: Տաւ ամլա՛ իմ ճոջ
կնիկն ես, էն իմ պստիկ: Ես քյե մեղա Աստըծու:

Կնիկ ասաց. - Չէ՛, մա՛րթ, տաւ ծի էնչափ չարչըրեցիր, ես
ամլա՛ էկա, քյե ազատեցի, ես թու մարթաւ չըմ ասի:

Էնու խամար հիրիկ ուր կընգան շատ հա՛վելի ուզեց, խընդ
թակավորու ախշիկ:

